Սույն գործով, նկատի ունենալով, որ Հայցվորը նախապես վճարել է հայցադիմումի ներկայացման համար օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը, միաժամանակ արձանագրելով, որ տվյալ դեպքում բացակայում է **գրավոր միջնորդությունը**՝ դատական ծախսերի հետ կապված, Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ 12.03.2024 թվականին կնքված թիվ «ՓՆՄԱՊՁԲ-24-20/3-5» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին 28.11.2024 թվականի որոշումը (ծանուցումը) և 09.12.2024 թվականի «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» թիվ 154 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, բավարարել:

անվավեր ճանաչել ՀՀ պաշտպանության նախարարության 28.11.2024 թվականի գրությամբ 12.03.2024 թվականին կնքված թիվ «ՓՆՄԱՊՁԲ-24-20/3-5» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումը,

անվավեր ճանաչել «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ պաշտպանության նախարարության պատվիրատուի ղեկավարի 09.12.2024 թվականի N 154 որոշումը:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 06.12.2024 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am